ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/77

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատախազություն
Մասնակից՝ «Էլիտ Էսվե» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Մկրտչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցում, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4287-2021 գրությամբ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատախազության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.02.2021թ.-ի թիվ 96 գրության հիման վրա, 23.03.2021թ.-ին «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 23.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/77 համարի ծածկագիրը:

31.03.2021թ.-ին, 09.04.2021թ.-ին և 22.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2021թ.-ին:

2. ՀՀ դատախազության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատախազությունը 17.03.2021թ.-ին ներկայացված թիվ 44/10.7/3284-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«ՀՀ դատախազության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցում ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) բոլոր չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն 23.02.2021թ.-ին էլեկտրոնային եղանակով ծանուցվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն Պատվիրատուին չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ ԷԼԻՏ ԷՍՎԵ ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4287-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի մասին «էլիտ էսվե» ՍՊԸ-ն մասնակցելով ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2 ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգին և էլեկտրոնային եղանակով ծանուցվելով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու մասին, գիտակցաբար չի ներկայացրել ապահովումներն ու չի կնքել պայմանագիրը, քանի որ ևս մեկ անգամ ուսումնասիրելով կազմակերպված ընթացակարգը հայտնաբերել է օրենսդրության խախտումներ, որոնք պայմանագրի կնքման դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն կարող էին հիմք հանդիսանալ պայմանագրի միակողմանի լուծման համար և էական վնաս հասցնել «էլիտ էսվե» ՍՊԸ-ին: Մասնավորապես.

1. ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն «Գնման ընթացակարգը կազմակերպելիս, պետք է հաշվի առնել, որ՝ եթե գնումների միասնական անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերում ներառված՝ վերջնական սպառման ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում

գնումների բազային միավորի յոթանասունևապատիկը, ապա գնման առարկայի ձեռքբերումը կարող է իրականացվել գնանշման հարցումեաե ձևով պայմանով, որ այն չպետք է ներառված լինի էլեկտրոնային աճուրդով կամ կենտրոնացված եղանակով կամ փակ պարբերական մրցույթով իրականացվող գնումների ցուցակում»: ՀՀ կառավարության 18.05.2017 թվականի թիվ 534-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանվել է էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը, որի 262-րդ կետում հստակ նշված է «Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում»: Հաշվի առնելով նշվածը, ակնհայտ է, որ վերը նշված ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերումը ուղղակի չէր կարող իրականացվել գնանշման հարցման ձևով և պետք է իրականացվեր էլեկտրոնային աճուրդի միջոցով: Հետևաբար գտնում ենք, որ ոչ միայն իրավաչափ է մեր կողմից սխալ հայտարարված ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելը, այլև ընթացակարգը պետք է չեղյալ հայտարավի:

2. Եթե նույնիսկ տեսականորեն ընդունենք, որ վերը նշված ընթացակարգի հակասությունն առկա չէր, ապա նույնիսկ կազմակերպված գնանշման ձնով գնման ընթացակարգում մեր համոզմամբ խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 80-րդ կետը, քանի որ չի ապահովվել հայտերի ներկայացման համար սահմանված նվազագույնը յոթ օրացուցային օր ժամկետը, մասնավորապես վերը նշված ծառայությունների ձեռքբերման հրավերը հրապարակված պաշտոնական տեղեկագրում 08.02.2021 թվականի ժամը 17:15, ինչով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 15.02.2021 թվականի ժամը 10:00:

Հաշվի առնելով վերը նշվածը գտնում ենք, որ ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2 ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության ակնհայտ խախտումներով, ինչի հետ կապված «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի հրաժարվելը ընթացակարգի հետագա մասնակցությունից մաբողջությամբ իրավաչափ է, իսկ նշված ընթացակարգը մեր կարծիքով անհրաժեշտ է չեղյալ հայտարարել և օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել նոր ընթացակարգ, որին «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն կմասնակցի:»:

4. <u>ՍՑ-LO-2021/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ դատախազության կողմից տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 08.02.2021թ.-ին հայտարարվել է «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն:

iii. «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին:

v. 17.02.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն, 23.02.2021թ.-ին, aemeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը, առաջարկել է պայմանագիրը կնքելու համար սույն ծանուցումն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ դատախազություն ներկայացնել որակավորման ապահովում պայմանագրի ընդհանուր գնի 100 տոկոսի՝ 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

vii. Հանձնաժողովի 11.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն 23.02.2021թ.-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում Մասնակիցը Պատվիրատուին չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին: ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4287-2021 գրությամբ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված

մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ դատախազության կողմից տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 08.02.2021թ.-ին հայտարարված «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված 17.02.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից

հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

Պատվիրատուն, 23.02.2021թ.-ին, aemeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը, առաջարկել է պայմանագիրը կնքելու համար սույն ծանուցումն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ դատախազություն ներկայացնել որակավորման ապահովում պայմանագրի ընդհանուր գնի 100 տոկոսի՝ 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով: Սակայն Հանձնաժողովի 11.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն 23.02.2021թ.-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում Մասնակիցը Պատվիրատուին չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին: ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա

մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Պատվիրատուն «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերումը չէր կարող իրականացնել գնանշման հարցման ձևով, այլ՝ պետք է իրականացներ էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն որոշման 2 հավելվածով սահմանված էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 14-րդ կետերի համաձայն՝ Օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը:

Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների» ցուցակի 262-րդ տողում նշված է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունը:

ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2021 թվականի ընթացքում պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելիս գնման ձևերը նախապես չեն համաձայնեցվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ: Ընդ որում էլեկտրոնային աճուրդների համակարգի վերագործարկման դեպքում, այն գնումները, որոնք գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթակա են կատարման էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով, և համակարգը գործարկելու դրությամբ հաստատված չեն դրանց կազմակերպման համար անհրաժեշտ հայտարարության և հրավերի տեքստերը, իրականացվում են սույն ենթակետում նշված համակարգի միջոցով՝ գնումների պլանում կատարելով դրանից բխող փոփոխություններ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից ըստ պատվիրատուների, համակարգի վերագործարկման համար սահմանված ժամանակացույցը:

ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդների համակարգը վերագործարկվել է, խնդրել են 11.03.2021թ.-ից սկսած գնումները կատարել վերոնշյալ համակարգի միջոցով, հաշվի առնելով նույն նորմով սահմանված պահանջները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը, իսկ գնման առարկան նշված ցուցակում ներառված լինելու պարագայում՝ պատվիրատուն դրա գնումն իրականացնում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանվել է, որ էլեկտրոնային աճուրդների համակարգի վերագործարկման դեպքում գնումները պետք է իրականացվեն էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով: Տրանսպորտային

միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերումը ներառված է ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների» ցուցակի 262-րդ տողում, ուստի այդ գնումը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականը, 11.03.2021թ.-ից սկսած պետք է իրականացվի էլեկտրոնային աճուրդի միջոցով:

Վերոգրյալ իրավական և փաստական հանգամանքների հիման վրա, հաշվի առնելով, որ Ընթացակարգը հայտարարվել է 08.02.2021թ.-ին՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման ընթացակարգը պետք է իրականացվեր գնանշման հարցման ձևով, ինչը կատարվել է Պատվիրատուի կողմից, քանի որ այդ պահին էլեկտրոնային աճուրդների համակարգը դեռ չէր վերագործարկվել, ուստի Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն պնդումը, որ գնումը պետք է իրականացվեր էլեկտրոնային աճուրդի միջոցով, անհիմն է:

Ինչ վերաբերում է «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ նշված մեկ այլ հակափաստարկին, համաձայն որի՝ Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Կարգի 80-րդ կետի խախտում, այն է՝ Մասնակցի համար չի ապահովվել հայտերի ներկայացման համար սահմանված նվազագույնը յոթ /7/ օրացուցային օր ժամկետը, ապա Բողոքնոր քննող անձն արձանագրում է, որ Կարգի 80-րդ կետի համաձայն՝ գնանշման հարցման ձևով գնում կատարելու դեպքում հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ և ավելի տասնհինգ օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Պատվիրատուի կողմից «ՀԳԴ-ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է 08.02.2021թ.-ին, իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 15.02.2021թ.-ին ժամը 10:00-ն:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից թույլ չի տրվել Կարգի 80-րդ կետով նախատեսված խախտում, քանի որ յոթ /7/ օրացուցային օրվա ժամկետը հաշվարկվում է հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.gnumner.am) կայքում հրապարակման օրվանից (08.02.2021թ.-ից), որպիսի պայմաններում 15.02.2021թ.-ին ժամը 10:00-ին հայտերի ներկայացման համար վերջնաժամկետի սահմանմամբ Պատվիրատուն ապահովվել է նվազագույն յոթ օրացուցային օրյա ժամկետը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4287-2021 գրությամբ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/77 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**